174. Վանից դեպի ամ, «Ծիրանավոր» խաչքարի պատվանդանին

(Լուս. № 95)

Հ ՈՀԱ Մ 1222

Հրատարակված է՝ Ջալ 29, Դրիմ 54, Վիմ 248

1 Թ. ՈՀԱ։
2 Ես՝ որ Յոհանէս առ-
3 աջնորդ Սանահնիս էտու գ-
4 Ա̅ծածնի ձորին այգին և զանէրն ե-
5 ւ զայն հողն, որ ի վերի դեհին է՝ ի հիւր-
6 ատունս։ Որ խափանէ եւ հանէ՝
7 յերիս ա̅ր ժողովոյ-
8 ն նզովել լիցին. ամէն։
9 զԴԻԹ յ.։

Նկ. 95. Արձ. № 174։

Մանրություն.— 9-րդ տողը գրված է խաչքարի պատվանդանի հս կողի վրա։ Այդ տողը պետք է կարդալ զԴաւիթս յիշեցէք, որ է խաչքարի կազմողը։

Տարբերություն.— 1. Ջալ և Դրիմ առաջին տողը, որ գրված է պատվանդանի քիվի վրա արձանագրության մնացած մասերից մի քիչ բարձր, չեն ընդօրինակել, ուստի և արձանագրությունը թողել են անթվական։

2. 4-րդ տողում ձորին այգին եւ զանէրն Ջալ կարդացել է ձորոյ այգին եւ զանէրնին։

3. 5-րդ տողում և զայն հողն, որ ի վերի դեհին է՝ ի հիւրատունն Ջալ կարդացել է՝ զայն հողն որ մթերի դեհն է հիւրատունն։

175. Գյուղի այգիների մեջ, խաչքարի թիկունքին

Հ ՈԾԴ Մ 1205

Հրատարակված է՝ Ջալ 29, Դրիմ 53—54, Վիմ 41

1 ի թվականիս հայոց ի ՈԾԴ,
2 ի թագաւորութեանս վրա-
3 ց Թամարին, ի յամիրսպ-
4 ասալարութեանս Զաք-
5 արի եւ Իւանի եղբարց հարա-
6 զատաց որդեց մեծին Սա-
7 րգսի. ես՝ հայր Յոհանես գ-
8 ուառաւ Խաչինէցի, եկել բնա-
9 կեցա ընդ հովանեաւ սրբոյ
10 Ա̅ծածնիս եւ շինեցի զհիւր-